

րում աեղաւորում է Աղուանից Դիխոյ վանք կոչ-  
ուած մենաստանում Աւանդութիւն կայ, որ Ս. Լու-  
սաւորչի զլութիւն յետոյ տարուել է Խտապիաւ ուր  
Նետապօլ քաղաքում պահուում է նաև ինչպէս պատ-  
մում է Զամշեանը (Ա. 635), Ս. Լուսաւորչի  
անուանը նուիրուած մի եկեղեցու մէջ:

Այսպէս ուրեմն կանուխ ժամանակներից ըս-  
կած բաժան բաժան է լինում մեր ս. Հայրապետի  
մարմինը. Նորա նշխարների շնորհիւ կանգնում են մա-  
տուռներ և վանքեր Հայաստանում և Հայաստանից  
գուրս: Այդ նշխարներից մէկը՝ Ս. Լուսաւորչի  
աստամը՝ մի ժամանակ պահուում էր Աւագ վանքում:  
Մէկ այժմ մասունքը չկայ սակայն մնում է տու-  
ժիւ որ մի նշանաւոր հնութիւն է համարում և  
կոչում է Տեղամափ կամ ըստ Խնձինձեանի՝ Գեղ-  
թափ: Սա ձեռքի մը չափ միխրագցն փայլուն  
քար է, ասում է Գար. վ. Արուանձտեան. Նորա  
վերայ նուրբ արուեստով քան գակուած  
կայ երկու արծուի յաջմէթագուոր,  
ի ձախն թագու հիւ և ի կեդրունին մա-  
սունք կամ ակն դնելու տեղմը,  
ուր Ս. Լուսաւորչի ակրայն դրած են եղեր. այս  
գործ հիանալի և աննման, կաւանքեն թէ Կոստան-  
դիանոս ընծայած է մեր Տրդատին կամ Սեղբեստ-  
րոս՝ Լուսաւորչին: Ըստ անցրդք և հնախողգք, ա-  
սում է նաև յատկապէս հեռի տեղերէ եկած են  
զայս տեսնելու, և հիացեր են, շատ ալ չանացեր  
են արծաթով կամ այլ և այլ խոստմամբ և հա-  
տուցմամբ հանել զայն վանքէն: ինչպէս նաև հնար-  
քներ ու հրապոյր ի գործ զնելով, սակայն չեն  
յաջողած: Այս հնութեան համար Խնձինձեանը  
զրում է այսպէս Դեղթափ կոչեցեալ վեմ: յորում  
փորագու եալ կան չորք աւետարանիչք.  
զոր սրբոյն Սեղբեստրոսի ասեն տուեալ ի պարզե  
Լուսաւորչին: Երկու նկարագրութիւններն \* իրար  
չեն բանում: Երեւում է, որ երկուսը միւնոյն  
բանի վերայ չեն խօսում: \*\*

Կ. Կ.

(Կը շարունակուի)



\* Թոր. Աղբ. Բ. 57. Խմֆ. Աշխարհագր. Ա. 103.

\*\* Ահաստանի նիւու սափսկոպսի մոտ էլ մի մա-  
տոնն եղել է այս է Ս. Լուսաւորչի մատու Առասպելական  
տոնդեկութեան սայենով. Կարսէլ է կասկածել մատոնցի իս-  
կութեան վերայ: Ցես Թոնի Միութիւն, 23:

## ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՒԹԻԿՈՒՆ

ԿԱԹՈԼԻԿ ԽԵՆՎԵՑԻ

— **Օ**արմանալի եռանդ է ցոյց տալիս կա-  
թոլիկ եկեղեցին ժԹ: գարավերջին, այդ եռանդը  
նկատելի է մարդկային գործունեւութեան և կեան-  
քի բոլոր ասպարէղներում ինչպէս կարող են վկա-  
յել մեր քրոնիկոնների ընթերցողները: «Կաթոլիկ  
տարեգութեան» կոչուող շարաթաթերթը իւր վեր-  
ջին համարում ծանօթացնում է մեզ ամբազգաւ-  
յին, գիտնական, կաթոլիկ համաժողովների: Հետ  
և հրաւէր է կարգում մասնակցելու Պ. Համաժո-  
ղովին, որ պիտի տեղի ունենայ 1897 թ. օգոստոսի  
9—12 ս. 8.

Այդ համաժողովների գաղափարն յղացել է  
1885 թուին մի քրանիսացի կանոնիկոս, որ ունեցել  
է և իւր զօրաւոր հակառակորդները, Առաջին համա-  
ժողովը տեղի է ունեցել Փարիզում 1888-ի ապրիլի  
9-ին, երկրորդը կրկննոցն տեղում 1891-ին և երրոր-  
դը Բրիսուէլում 1894-ի 3—8 սեպտեմբերի: Համա-  
ժողովների գործական յաջողութիւնը պապուցել  
է դրա անհրաժեշտութիւնն և այժմ կաթոլիկ եկե-  
ղեցու բարձրագոյն հեղինակութեան պատպանեւ-  
թեամբ նախապատրաստուում է չորրորդ համագու-  
մարը: Առաջին ժողովին մասնակցել են 1.605 կա-  
թոլիկ գիտնականներ և գիտութեամբ հետաքրքը-  
րուողներ, երկրորդին 2.294, երրորդին 2.538 ան-  
ձինք աշխարհիս բոլոր կաթոլիկ երկրներից: Մաս-  
նակցողների մէջ են եղել կաթոլիկ հռչակաւոր  
գիտնականները: Առաջին համաժողովի աշխատու-  
թիւններն հրատարակուել են երկու մեծ հատորով:  
երկրորդինը ուժ և երրորդինը իննու որոնց մէջ մարդ-  
կային գիտութեան բոլոր ճիւղերի մասին հետազո-  
տութիւններ են եղել:

Ի՞նչ է արդեօք կաթոլիկ համաժողովների  
նպատակը: Աչա թէ ինչպէս է որոշում այդ նպա-  
տակը կաթոլիկ թերթը: Համաժողովների նպա-  
տակն է գիտութեան հողի վերայ համախմբել բո-  
լոր այն կաթոլիկներին, որոնք իրենց հանգամանք-  
ների և ընդունակութեան չափով հետաքրքրուում են  
գիտնական հետազուառ թիւններով: Կարեւոր և ան-  
հրաժեշտ է, որ կաթոլիկ գիտնականները միանան բա-  
լոր իրենց պաշտանակիցների հետ զանազան ասպա-  
րէզներում: սրա հետ միասին անհրաժեշտ է, որ  
կաթոլիկ եկեղեցու հաւատարիմ օրդիք համախմբ-  
րուեն գիտութիւնները յառաջ ասնելու համար:  
Այսու պէտք է ապացուցանէ կաթոլիկութիւնը,  
որ հակառակ իւր գէմ արծակուած մեղադրանքին:

նիքն ոչ միայն հակառակ չէ, այլ և մշակող է գիտութիւնների և յս նպատակներից զատ կաթողիկութեանը ցանկանում են սրանով կաթողիկ գիտութիւն յառաջ բերել, այսինքն՝ որ գիտութեան ամէն մի մշակող և կիրա կաթողիկութիւնը զիայէ, և յսպիսի համագումարները պիտի նպաստեն նաև գիտութիւնը ների տարածման իրենց դաւանակիցների մէջ, որով հասարակական կեանքի մէջ կաթողիկները պիտի կարողանան պատուաւոր գիրք բռնել և հերքել իրենց գէմ եղած հակառակնութեան կշտամբանքները, և նշագէս նոյն թերթն ասում է, այս համաժողավացների բնաւորութիւնը պիտի լինի եկեղեցու մերժանքութեամբ, պաշտպանողականու-

Եկեղեցու հիմքը ճշմարտութիւնն է. ոչինչ  
այնքան չի նպաստել մի եկեղեցու յարատևութեան,  
որքան Ճշմարտութեան հետազօտութիւնը կամ գի-  
տութիւնների մշակութիւնը. ևթէ արդարեւ այդ է  
կաթոլիկ համաժողովների նպատակը, ուրեմն գե-  
մառած չէ յաւիտենական Ճշմարտութեան նախա-  
զգացումն այդ աշխարհակալ եկեղեցում.Պատմա-  
կան անցեալը միայն կասկածուտ է դարձնում մեզ և  
ակամայից յիշում ենք եղուիտական գիտու-  
թեան շրջանը. Արևելքի Խաւարում ապրող եկե-  
ղեցինների համար, որոնք գեռ իրենց գոյութեան  
համար պիտի կռուեն, հարկաւ վաղաժամ է զիտ-  
նական համաժողովների խնդիրը՝ բայց ոչ ներքին  
ամրութեան և հին կաղմանկերպութեան պահպանու-  
թեան համար կարևոր ժողովները. Կաթոլիկ եկե-  
ղեցին ըլ նայելով իւր ահագին ուժին, շարունակ  
կազմութուում է նորանոր մտքերի շփմամբ. ամէն  
մի կաթոլիկ երկրի եպիսկոպոսունք գոնէ տարէնը  
մի նուագ հաւաքուում են և ամբողջ մի տարուան  
միասնակ գործունէութեամբ ծրագիր են կազմում  
ժամանակ չէ արդեօր մեզ էլ հոգալ այդ մասին:

— Փրանսիայում այս տարի պիտի տօնուի  
Կլովիսի մկրտութեան ժԴ. դարեակը, Փրանկեն-  
րի թագաւոր Կլովիսը 496 թուի 25-ին գեկտեմ-  
բերի մկրտուեց Աէյմս քաղաքում և քրիստոնէու-  
թիւնն այդ օրուանից տէրութեան կրօն դարձաւ  
Փրանսիայում։ Անաստան պալլը ուրախացած այս  
դարձի վերայ, Փրանսիան անուանեց «եկեղեցու ան-  
դրանիկ դռւստր» որ պատաշական մակրի դարձաւ  
Փրանսիական եկեղեցու, Լեոն ժԳ. պապն առա-  
քելական օրհնութիւն է աւղարկել Աէմյուի եպիս-  
կոպոսին և յորդորել է ամենայն ջերմեռանդու-  
թեամբ տանելու այդ մեծ հանդէսը, որ արդէն  
սկսուել է մի հանդիսաւոր պատարագով ապրիլի  
Բանի.

— Հոռվմում մեծ պատրաստութիւններ են  
տեսնուում առնելու առաջիկայ յունիսի 21-ին

Լևոն ՓԳ. պապի առաջին անգամ հաղորդուելու  
75-ամեակը, Յայտնի է, որ կաթոլիկ եկեղեցին ե-  
րեխաներին չէ հաղորդում, այլ ո. Հաղորդութեան  
արժանացնում է միայն որոշ հասակի պատանիներին  
և այն էլ դաւանական քննութիւնից յետոյ, Այս  
առաջին հաղորդութիւնը մի տեսակ չափահա-  
սութեան է քաղաքացիութեան նշան է համարուում  
Հռովմի բոլոր ազնուականները յետաձգել են իրենց  
ընտանիքների առաջին հաղորդութիւնները մինչև  
յօւնիսի 21: այսպէս էլ Վատիկանից շըջարերական  
է արձակուած, որ աշխարհիս ամենայն կողմերի կա-  
թոլիկները յետաձգեն առաջին հաղորդութիւն-  
ները մինչև այդ օրը, Յունիսի 21-ին Հռովմի 470  
եկեղեցիների մէջ ևս հաղորդութիւն պիտի արուի  
հաւատացեալներին, որոնց հրաւիրել են այդ օրն  
հաղորդուելու պապի հետ միասին:

— Հոռովմի պապի բերան «Օսսէրվատորէն»  
հրատարակել է Անոն ԺԳ -ի երկու նամակներն,  
որ ուղղուած են Բուէնոս—Արգենտին և Սանտեագոյի  
եպիսկոպոսներին, յօրդորելով, որ Նրանք ջանք  
գործ գնեն Հարաւային Ամերիկայի այդ երկու տէ-  
րութիւնների Արգենտինայի Հասարակապետութեան  
և Զիլիի մէջ Հաշտոթիւն կայացնելու, Երկու  
տէրութեանց կառավարութիւններն ևս չնորհա-  
կալութիւն են արել պապին այդ գործի համար:

— Անդլիական արմատականների բերան ,Daily Chronicle: Հրատարակել է պատի դիւանագետ ծիրանաւոր Ռամզովայի մի նամակը, որ վերաբերում է միջազգային խաղաղութեան մի դատարան Հիմնելու ինդրին: Եհա այդ նամակի թարգմանութիւնը համաձայն „Vérité“ լրագրի:

Աշխարհին Փրկիչ Աստուծյա տուած ամենաթանգարակ պարզեւնքին մէջ է ու խաղաղութեան պարզեւը. Նա այլ բան չէր քանկանում, քան թէ խաղաղութեան թագաւորութիւնը այս աշխարհին վերաց. Ուստի Եւ գերազոյն քանայապես որպէս Տեղակալ խաղաղութեան յափառենական իշխանութեան, միշտ օգում է ըստ իր կարեաց ազգերի մէջ միաբանութիւն Եւ համաձայնութիւն հաստատելու: Այս այս իր պատճառաւ նորին Սրբութիւնն, երբ տեղեկացաւ ինձնից ծեր Նպատակին, որ օգում էք մի մշտական դատարանի հիմնարկութեան, որ վճռէր ազգերի մէջ ծագած վէճնին ու պատճառազնի վտանգն հռուցնել ըստ կարողացաւ ծագել իր գորունակութիւնն ու ցանկութիւն յայտնել, որ Աստուծ պասակէ յաջորդութեամբ այդքան գովելի ջանքերը: Արուայստեղով Զեզ իմ սնկեղդ յարգանաց զգացումները բախտաւոր եմ կոչելու ինձ Զեզ Խ. Ժ.

— Ական ԺԳ. մի նոր կոնգակ ևս հրատարակել է արևելեան եկեղեցիների վերաբերութեամբ շատկապէս իւր կողմից «անձնական դրդմամբ» (Motu proprio). Այս կոնգակը հռովմէական—Եղուհւական ողու Ֆիշը թարգմանութիւնն է։ Աչքի առաջ ու

Նենալով որ արևելեան միաբանեալ եկեղեցիք իրենց սեփական ծէսերն ունին և կառավարուում են սեփական առաջնորդներով ու պատրիարքներով ունտի կարիք է զգացուել սերտ կապ հաստատելու այդ պատրիարքների և լատին կրօնաւորները միջև։ Տեղական և լատին կրօնաւորները պիտի համաժողովներ կազմեն և եկեղեցու միութեան և բարեկարգութեան մասին հոգան։ Միթէ այս չենշանակում, որ լատինները պիտի միջոց ստանան հեղողչետէ ազգային եեղեցիք լատինացնելու, Պապի կոնդակն այդ նպատակն ամեններն չեն իսկ ծածկում, կարգագրելով, որ մեծ հանդէսներին լատինական ծիսով ժամաներութիւններ կատարեն, իրեւ թէ միութեան կապն աւելի ամրապնդելու համար։

— Արբեւ Լըմեր, ֆրանսիական ազգային ժողովի անդամը, ապրիլի 3-ին (Ն. Տ.) մի նամակով գիմել էր նախկին նախարարապետ և արտաքին գործոց նախարար Լէսն Բուրժուային և հարցրել ֆրանսիական կառավարութեան կարծիքը հայկական խնդրի վերաբերութեամբ։ այդ նամակն ու նրա պատասխանը հրատարակել է աչս ֆրանսերէն «Կաթոլիկական տարեգրութեան» (Annales Catholiques) թերթը։ Վերապատուելի արբան յայտնումէ, որ ինքը համաձայն նախարարապետի ցանկութեան հրաժարումէ ազգային ժողովում հարցումն անելուց և գոհանումէ մասնաւոր բացատրութեամբ։ Առաջ թերելով անդիմական կառավարութեան հրատարակած փաքք Ասիոյ կոտորածներին վերաբերալ պաշտօնական զեկուցումները, Արբեւ Լըմերն, առաջարկումէ 1. մի գեղին գրքով և կամ մի այլ իրեն նախարարին յարմար երեցած ձևով պարզել կառավարութեան կարծիքը Հայաստանում կատարուած իրողութիւնների վերաբերութեամբ, որովհետև ֆրանսիան երջանիկ կը լինի տեսնելով։ որ իւր կառավարութիւնը, որ 1860 ին, Մարտինաների կոտորածներից յետոյ, կարգը վերականգնեց Ասորիքում, այսօր էլ աւելի գըժուար հանգամանքներում կատարել է իւր ոսլոր պարտականութիւնները։ Զ. ապագայի վերաբերութեամբ վասահացնել մի այնպիսի արտայայտութեամբ, որից երեսումէ թէ հասարակագութութիւնը շնորհիւ իւր լաւ յարաբերութիւնների Տաճկաստանի հետ և գործելով վեց մեծ պետութիւնների հետ, պիտի ձեռք բերէ Բեռլինի դաշնադրութեան 61 յօդուածի ճշգրիտ գործադրութիւնը։ «Այսու հասարակապետութեան կառավարութիւնը ցոյց կը տայ, որ կատարումէ արևելքում ֆրանսիայի առ քրիստոնեայս ունեցած աւանդական առաքելութիւնն, որ է պաշտպանութիւն իրաւանց և արգելումն ճնշումների»։ Այս նամակին Լէսն Բուրժուան պատասխանել է

ապրիլի 14-ին։ Այս քաղաքագիտական պատասխանի մեծանշանակ խօսքերն են։ «Խնդրիս առիթ եղող իրողութիւնները յարուցել են մի խումբ շատ բարդ խնդիրներ, որոնց վերաբերութեամբ շարունակուող բանագնացութիւններն ինձ ստիպումեն, առ այժմ, մի այնպիսի զգուշութիւն պահպանել»։ որ գուք դիւրութեամբ կը հասկանաք (Lés événements dont il s'agit ont soulevé un ensemble de questions assez complexes et les négociations dont ils continuent d'être l'objet m'imposent, pour le moment, une réserve que vous comprendrez aisément.)

Այս խօսքերին նախարարը կցումէ և իւր վրայութիւնը, թէ ֆրանսիական կառավարութիւնը, հաւատարիմ իւր աւանդութիւններին, պաշտպանէ հանգիսանում փոքր Ասիոյ քրիստոնէից։ Ֆրանսիան հենց առաջին վայրկենից միացել է մեծ պետութեանց հետ սուլթանին ստիպելու, որ իւր իսկ շահու համար բարենորդութիւններ մացնէ հայկական գաւառներում։ Այս մասին սուլթանը պարտականութիւններ է ստանձնել, որոնց իրագործումն շտապեցնելու է աջնատում կառավարութիւնը։

— Կայսեր շաբաթաթերթի նոյն համարում կարգումնելք պատէր Ֆէլիքս Շարմէտանի մի նամակը, որ յայտնելով թէ ֆրանսիայում յօդուտ հայոց արգելն ժողովուել է 200,000 ֆրանկ, շնորհակալութիւն է անում, մանաւանդ Փարիզու թեմին, որ 30,000 ֆր. է ժողովուած, հրաւիրումէ կը դիմին և կրկին օգնութեան ձեռք կարկառել այն 80,000 հայ ընտանիքներին, որոնք անտուն, անտէր և անհաջ են։ Յիշատակելով այն հազարաւոր որբերի և տիտուր ու յափշտակուած կանանց վիճակը, հայր Շարմէտանը յորդորումէ, մանաւանդ քրիստոնեայ մայրերին, օգնութեան հասնելու, որպէս զի հնարինի որբանցներում պատուարիլ այդ ողորմելի զոհերին։

Կարիք կայ արդեօք հայ մայրերին նոյնը յիշեցնելու, հայր Շարմէտանի հետ մենք էլ պիտի կրկնենք, որ թող այն մայրերը, որոնք Աստուծոյ օրհնութիւնն իրենց ընտանիքների վրայ բերել են ցանկանումնն, ձեռք կարկառեն այդ տնանիքներին, Այս ժողովարութիւններն ընդունուումն Paris, Bureaux de l' Oeuvres d'Orient, rue du Regard, 20։

— Թէ ի՞նչ զգացումներով են մեզ օգնութեան ձեռք կարկառում ֆրանսիացի պատերները, պարզ երկում՝ „Annales catholiques“-ի մի յօդուածից, որի վերնագիրն է «հայկական խնդիր» և հեղինակն է Սէն-Սիլվասի սեմինարի պատմութեան ուսուցիչ և Գոնդալ, Ցաւումնելք, որ այդ յօդու-

աճը չենք կարող բառացի թարգմանութեամբ յառաջ բերել բայց դրա համառօտ բովանդակութիւնն է ետեւեալն է։ Հեղինակը մի հակիրճ և ամփոփ հայեացը է ձգում հայի անցեալի վրայ, այժմեան նրա վիճակն յուսահատական է համարում և հօգս է քաշում թէ ո՞վ պիտի հայ եկեղեցուն ժառանգէ։ Հասկանալի է, որ բնական ժառանգ հայ եկեղեցու Պ. Գոնդալն Հռովմին է համարում։ Յօդուածիս մէջ կան սովորական թիւրիմացութիւններ և սխալներ, որ յատուկ են եւրոպացոց մանաւանդ կաթոլիկներին, որոնց աղքիւրը կամոլիկ հայերն են։ Գրանական հեղինակը կարծումէ, որ հայերը Եւտիք է սին են հետևեն Ե. դարուց սկսած և այժմ իրենց սիրով անուանումն Գրիգոր ան (Grégoriens) ի պատիւ ս. Գրիգոր Լուսաւորչի։ Հայոց առ աջին Լուսաւորչի։ Հասկանալի է, որ Հազարերորդ անգամն Էլ եթէ կրկնենք, որ մենք եւտիքական չենք, կաթոլիկները պիտի իրենցը կրկնեն, որովհետեւ մենք պապին չենք հպատակում։ Սակայն զիտնական ֆրանսիացին պիտի իմանար, որ հայերի առաջին Լուսաւորչը ս. Գրիգորը չեն զել, իսկ թէ ո՞ր հայերն են իրենց սիրով Գրիգոր որ եւան անուանում, այդ մեզ յայտնի չեն Աւելի և ցաւալի են յարգելի յօդուածագի թիւր գաղափարները հայոց եկեղեցու կազմակերպութեան մասին։ Նա կարծումէ որ Ա. Էջմիածնի Կամուղիկոսը Ա. Պոլսի, Խրուսաղէմի պատրիարքներն ու Սոփ և Աղթամարի կաթողիկոսները միմեանց հետ անհաշտ են և անիծում են միմեանց։ Կատարեալ զրպարտութիւն և հայուակներ են յօդուածագրի խօսքերը. .... des évêques sans autorité, des prêtres sans dignité, des fidèles sans foi ou sans lumière, de l'aven de tous, c'est une église qui s'effondre. .... Եպիսկոպոսներ առանց հեղինակութեան, քահանայք առանց արժանեաց, հաւատացեալք առանց հաւատոց, կամ լուսոց, ամէնքի խոստովանութեամբ մի եկեղեցին որ լուծուում է։ Այս խօսքերին կզում է նա աւելի մի նշանաւոր խօսք. Առաջ պիտի հասնի այս հարուստ ժառանգութիւնը (այսինքն Հայոց եկեղեցու ժառանգութիւնը) և մերժելով բոլորի ձգուումները, թէ օրմուգումների և թէ բողոքականների, նա բնական ժառանգ է համարում կամոլիկ եկեղեցուն (՞.՝ ՞)։ Հայոց քաղաքական վիճակը հեղինակս յուսահատական է համարում, որովհետեւ մէկն սպանում է հային, միւսը խեղդում, իսկ երրորդն ուզում է շահու նըւպատակով սորիացնել նրան։

Այսպիսի յարձակումներին դիմանալու անընդունակ է տեսնում նա հայ եկեղեցուն և իր ապացոյց առաջ է բերում մի հայ եպիսկոպոսի (?) խօսքը,

— « Քսան տարում ասում են մի հայ եպիսկոպոսի, ձեր թեմը բոլորովին բողոքական գարձած կը լինի».

— Խնձ Բնչ փոյթ, պատասխանում է Ժըպտաւով եպիսկոպոսը, քսան տարուց յետոյ ես Էլ չեմ լինի, Խնձնից յետոյ կուզէ թող ջրհեղեղ լինի».

Ճիշդ է նկատում հեղինակը, որ այսպէս խօսողն աւելի է քան թէ հիւանդ. բայց արդպէս է խօսում ամէն մի հայ եկեղեցական։

Դրա դէմ բողոքում է հայ եկեղեցու հարիւրաւոր պաշտօնէից արիւնը, որ գեռ նոր է թրթել իւր հայրենի հողը».

Դոյն այս ձգտումներով գրուած մի յօդուած է „Le catholicisme en Arménie (կաթոլիկութիւնը Հայաստանում) երկար ու ձիգ յօդուածը, որ պատմական մի տեսութիւնն է յայտնի կաթոլիկական աղքիւրից։ Այս յօդուածին նիւթեր է մատակարարել գերապայծառ Ազարեանը։ Զամշեանի և ալլոց գրած հայ կաթոլիկների և հայոց կաթոլիկութեան պատմութիւնն է այդ, որ հերքելու համար հատորներ պիտի գրել։ Այդ պատմութիւնը ծնունդ է միիթարեանների և կոլլէցեանների մաքի և զուգագիպութեամբ հերթուում է մի այլ կաթոլիկ հանգիստի նորերս հրատարական մի կոլլէցեան հայ վարդապետի պատմութեամբ, որ ոչ մի սատանայական միջոց չէ ինտոյել Մարգենում կաթոլիկութիւն հաստատելու համար։

— Կաթոլիկ աշխարհը մասնաւորապէս վըրանսիական պատէրները սաստիկ զրադուած են հաւածուած հայ, քրիստոնէից ճակատագրով, կղերարական թերթերն զրացուում են հայ եկեղեցու արդի վիճակով և քննելով նրա քաղաքական դրութիւնը, հայոց միակ փրկութիւնը կաթոլիկութիւնն են համարում։ Այս առմիւ „Annales catholiques“ մինչեւ իսկ նեղութիւն է յանձն առել ցրելու հայոց կատաձները. Փրանսիացի պատէրների կարծիքով Հայաստանեայց եկեղեցու փարախին հաւատարիմ հայերը խորցում են այլ եկեղեցիների միութիւնից ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն գ ա յ ա զ ա յ ի համար։ Աւմողիկ թերթը ճգնում է ապացուցանել, որ եթէ արդարացի են հայոց եկեղեցու երկիւղները վերաբերութեամբ բիւզանդական եկեղեցու, անարդար են կաթոլիկութեան վերաբերութեամբ Անշուշտ աւելորդ ջանք կը լիներ ապացուցանելը, որ մենք դժբախտ միութեան փորձերից ի՞նչքան ենք վնասուել, Սակայն միայն կաթոլիկները չեն, որ խեղճ և նա հատակ հայ եկեղեցու ապագայի մասին հոգում են. ոլաւեան բարեգործական ընկերութեան ապրիլի 7-ին նստի ժամանակ այդ խնդրով զրադուել է և ուռւ զօրավար և աստուածաբանութեան սիրահար պ. Ա. Կի-

րեւ։ որի կարծիքով արևելքում յաջողութիւն ունենալու համար ուսու քաղաքականութիւնը պիտի մի տիեզերական ժողով գումարէ է հերձուածների, հայոց հարէշների և զպտիների եկեղեցու խնդիրը պարզելու համար։ 2ենք համանում թէ «հայոց եկեղեցու» ինչ խնդիր կայ, որ պիտի պարզուի, բայց զարմանում ենք, որ աստուածաբան—զօրավարը չը զիտէ, որ հայ ոց եկեղեցին այլ և տիեզերական ժողով ճանաչել կարող չէ։ տիեզերական ժողովները երրորդով վերջացած են մեր եկեղեցու համար։ Մահուան հետ կառուղ հաւատացեալների հոգու փրկութեան համար մտածելուց առաջ պէտք է մարմնի փրկութեան համար մտածել։ այդ է պատուիրում և «Սամարացու առակով» մեզ վարդապետող Փրկիչը։

### ՕՐԹՈԴՈԽԸ ԵԿԵՂԵՑԻ.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԻԱՐՔՈՒԹԻՒՆԻՆ.

— Գերերջանիկ Անթիմոս Է. պատրիարքի վիճակն ևս սկսում է ծանրանալ։ Եւրոպական օրաթերթերն հաղորդում են, որ արդէն Կ. Պոլոսում մի կուսակցութիւն է կազմուել նրան գահընկեց անելու իրեւ թէ այն բանի համար, որ յունական եկեղեցու շահերին պաշտպան չէ Բ. Պրան առաջ։

— Կրետէ կղզում ծագած ապստամբութեան առթիւ սուլլմանը պալատ է հրաւիրել պատրիարքին և պղտարարել իւր հեղինակութեամբ զապելու ապրտամբ կրետացիներին։

ՎԵԼԵՆԱԿԱԼԻՆ ԵԿԵՂԵՑԻ.

— Զատկի յաջորդ շարամը Յունաստանը տօնեց իւր ազատութեան 75-ամեակը մեծ եկեղեցական և աշխարհական հանդիսով Հին Յունաստանի փառքերից մէկն էլ ողիմպական խաղերն էին, որ այս առթիւ վերսկսուեցան։ Եյդ խաղերի տեղը, Հին ասպարէզը կամ ստաղիսով նորոգելու համար մի հայրենասէր Աւերով անունով մեծ գումար էր յատկացրել։ Աղիմպական խաղերին մասնակցեցին եւրոպական ազգերից շատերը։ բացման օրը 80:000 ժողովորդ ներկայ էր հանդիսին, որ 12 օր տևեց։ համաձայն կառավարութեան որոշման այդ խաղերը պիտի տեղի ունենան ին ձեռվ ամէն չորս տարին մի անգամ։ Հանդիսի բացումն սկսուեցաւ եկեղեցական մաղթանքով։ որին աբբունի տունն էլ ներկայ էր։

ԲՈՂՋԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

— «Հաւատակից են բողջարները ուսուաց թէ ոչ ահա մի խնդիր։ որով զբաղուում է առս մա-

մուլը, որովհետեւ 1872 թ. Կ. Պոլսի ժողովով բոլցարները հերձուածող են ճանաչուած իրեւ եկեղեցու մէջ ցեղական կամ ազգային բաժանումն մոցնելու համար։ Ռուսաց «Եկեղեցական համբաւարերն» համաձայն է, որ այդ վեճը ծագել է Կ. Պոլսի պատրիարքարանի շահամարութիւնից և ընդունում է բողջարներին հաւատակից ուսուաց։

### ԹԱՌԱՋԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Ս. ԹԱՌԱՋԱՑ ԽԱՆԴԱՑԸ ՄԱՍԿՈՒԱՅՈՒՄ.

Ամրող Ռուսիայի և գործէ բոլոր աշխարհիս անձկանօք սպասուած մեծ հանդէսը կատարուեցաւ։ Կայսերական պալատի նախարարի հետագիրը, որ աւետեց մեծատարած տէրութեան բոլոր բնակիչներին այդ ուրախութեան լուրն, ուղարկուած է Պոսկուայից մայսիի 14-ին առաւօտեան 11 ժամին։

Կէս տարի է ահա, որ Պոսկուան պատրաստում էր այդ մեծ հանդիսի համար։ միջոցներ որ ժամանակիս քաղաքակրթութիւնը ընձեռում է շըքեղութեան համար։ բոլորն էլ գործ էր գրած Պոսկուան և Կրէմլը զարդարելու համար։ Աշխարհիս չորս անկիւններից, բոլոր քրիստոնեայ և ոչ քրիստոնեայ ազգերն իրենց ներկայացուցիչներին էին ուղարկել այդ հանդիսին շուրջ տալու համար։ Եւրոպական և ասիական մեծամեծ տէրութիւնները մրցում էին միմեանց հետ Ռուսիոյ մեծազօր Կայսեր իրենց խորին պատկառանքը ցոյց տալու համար։ Պայիսի 6-ից մինչև 26 Պոսկուան մի արտասովոր և չտեսնուած կենդրոն էր բոլոր ազգերի ներկայացուցիչներին, սկսած Ամերիկայից մինչև 2ին ու Ճափոն, ևսկիմոսներից մինչև Սիամ և Ճնդկաստան։ Այս ներկայացուցիչների մէջ կային անկախ թագաւորներ, իշխաններ, արքայակներ, նախարարներ և բարձրագոյն աստիճանի հոգեռորդականներ, այլ և աշխարհիս գործէ բոլոր լեզուներով լոյս տեսնող մամուլի ներկայացուցիչներ։ Արտաքին ներկայացուցիչներից աւելի բազմաթիւ և բազմազան էին Ռուսիոյ ներքին ներկայացուցիչները։ աղնուականների պարագունեները, քաղաքագետները, գիւղագետները, քրիստոնէից, մահմեդական և նոյն իսկ կոապաշտ ու բուդդայական կրօնների ներկայացուցիչները։

Առանձին շքեղութեամբ տեղի է ունեցել Կայսեր մուտքն ի Պոսկուա, որի մասին հիացմունքով է խօսում ամերող մամուլը։

Թագագրութեան հանդէսն սկսուել է առաւօտեան 9 ժամին, երբ Պոսկուայի բոլոր եկեղեցեաց զանգերն սկսել են հնչել ու Տայնիցիի աշտարակից որոտացել են թնդանօթները։ Կայսերական Զայգըն երբ մերձեցել է Աւսպէնսկի տաճարի գրանը,

ընդառաջներով է հոգեկորական դասն, Մոսկովյայի մետրոպոլիտը ճառ է խօսել, Պետերբուրգի մետրոպոլիտն ու խաչը մատուցել է ի համբայր, իսկ Կիևինը է սրբկել օրհնած ջրով, Տաճարում ըսկուել է ապա թագագիրութեան հանդէսը, որին մասնակցել են բոլոր ռուս բարձր հոգեկորականութիւնն և օրթոդոքս պատգամաւոր եկեղեցականները, Ժամը տասից կ վայրկեան անցած Կայսրը հաճել է թագը գնել Եւր գլխին, իսկ երեք վայրկենից յետոյ փոքր թագով պատկել Կայսրուհուն, Ժամը 10 և 40 վայրկենին սկսուել է Կայսերական տիտղոսների ընթերցանութիւնն, որին ձայնակցել են դուրսը թնդանօժների որոտներն ։ Ապա մերձեցել են Կայսերական ընտանիքի անդամներն և օտար ներկայացուցիչներն ի շնորհաւորութիւն, Ժամը 10-ից 55 րոպէ անցած Կայսրը սկսել է ծնկաչոր կարդալ ու բոշուած աղօթքը, ապա Պետերբուրգի մետրոպոլիտը կարգացել է Կայսերական մաղթանքը, որին ամենքը ծնկաչոր ունկնդրել են։ Այս աղօթքից յետոյ տեղի է ունեցել օծումն և հաղորդութիւնը, որից յետոյ Կայսերական Զօյզը Կարմիր գոնից ողջունել է ժողովրդին, որ պատասխանել է որոտածայն «ուռայով»։

— Թագագիրութեան առթիւ առատաձիր վարձարութիւններ են ստացել բոլոր բարձր պաշտօնեաները՝ ինչպէս միշտ, այս անգամ ևս չէ մոռացուել ժողովուրդը։ Կայսերական հրովարտակը անհամար պատժապարտներին պատիճները ներել և թեթևացըրել է, բացի դրանից ներուել է և ժողովրդական հարկի պարտքերից մի մեծ գումար, մերձաւորապէս 107,000,000 ռուբլի։

— Մոռակայի բոլոր քաղաքներում և գիւղերում մայիսի 14—16 մեծահանդէս տօներ են կատարուել, ամենուրեք շքեղ ճրագալոյց է եղել երեք գիշեր շարունակ։ Շատ քաղաքներ և գիւղեր յաւերժացրել են թագագիրութեան յիշատակը մընայուն հաստատութիւններով։

— Մոսկովյայի մեծահանդէս ուրախութեան տօներին մի գժբախտութիւն տերութեամբ է համակել ամենքին Խոդինսկի գաշտի վերայ պատրաստուած ժողովրդական ճաշին մասնակցող ժողովրդի բազմութիւնը այնպէս է խուժել գեղի ճաշարանները, որ չէ նկատել ճանապարհի վրայ փոքրիկ խրամը, որի մէջ տանտակ են գնացել մօտ 2000 հոգի։ Կայսերական առատաձեռնութեամբ հոգ է տարուած թշուառների ընտանիքների համար։

ԲՈՂՋԱՑԱԽԱՆ ԽԱՆՎԵՅԻ.

ԳԾՐՄԱՆ ԽԱՆԱ.

— Քողօքական Գերմանիան ծանր օրեր է անցացնում։ Վիլհելմ Կայսրն իւր անհաստատ համա-

կրութիւններով և հակակրութիւններով մեծ վիշտ է պատճառում բողօքական գերմանացիններին։ Դասականապարհորդած ժամանակը Վիլհելմ կայսրն այնքան սիրազիր և անօրինակ մտերմական տեսակցութիւն է ունեցել պապի ներկայացուցիչներից մեկի հետ, որ բողօքական եկեղեցականութիւնը ներել կարող չէ, բայց աւելի ևս գրգուռել է այդ եկեղեցականութիւնը Վիլհելմ կայսրի մի հեռագրից, որի մէջ նա պատասխան էր ի քաղաքականութեան մէջ խառնուելն է գատապարտում։ Այս այդ հեռագիրին։

— Տոէսօներն այն վախճանն ունեցաւ, որ ես տարիներ առաջ գրչակել էի։ Քաղաքական պատօրներն անտեղութիւններ են։ Ու քրիստոնեայ է, այս ընկերական (Social)։ Է, քրիստոնեայ ընկերական յիմար բան է եւ տանում է դէպի անձնանանութիւնն եւ անհամբերողութիւնն, որոնց երկուսն էլ քը քրիստոնեութեան բոլորովին հակադիր են։ Պարու պատօրներ թուող իրենց համայնքների հոգոց համար հոգան, մերձաւոր ների սէրը մշակն, բայց քաղաքականութիւնը թողնեն, քանի որ այդ նրանց գործը չէ։ Վիլհելմ կայսր եւ թագաւոր։

Այս օրեւս Ըստուգարտում ժողով պէտք է գումարեն նոյն այդ «ընկերական պատօրները» քրիստոնեայ սրոնք պատրաստուում են բողոքելու այդ խօսքերի գէմ։

25 մայիսի։

7. Քարամեան.

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

### ՓՐԵՌՈՒԹԵԱՆ ԽԱՉԲ.

Սիրտս վշտահար, մոլորած մողով, նայում եմ առաջ, դիտում եմ հեռուն, Եւ հարցընում եմ՝ վըհատած հոգով, թէ ուր պիտ համնի մեր նաև երերուն։

Ալեծոսի ծովին դարձած խաղալիկ եւ խասրի մէջ կորցրած ուղին, Առաջ ենք զնում՝ վաստակած, լրիկ, Անզօր հապատակ մեր ճակատագրին։

Եւ տեսնում եմ ես, ամենքս խոնարհ, Մի յուսով միայն շենք ընկճուում ցայսօր, Այդ մեր վրկովթեան խան է լուալատ, Մեր յաւէտ անշէջ փարոս դարաւոր։

Սեամթոյր երկնից մոայլ երեսին ֆայլել է նա միշտ իքը յուսոյ մի շող — Սիւն կենդանութեան, Մայր էջմիածին, Տարագիր հօտի արթոն ժողովող։

8. ՅՈՎՃԱՆՆՈՒՍԱՆ.